Սերս

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Անդրանիկ Կարապետյան

Հեռ. +374 77859930

Սերս գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանում, մարզկենտրոնից 36 կմ հարավ-արևելք։ Սերսը ՀՀ Վայոց ձորի մարզի բարձր լեռնային և սահմանմերձ բնակավայրերից է։

Գյուղն ունի հին ու վաղեմի պատմություն։ Հիմնադրման տարեթիվն անհայտ է։ Հայտնի է, որ գյուղը պատկանելիս է եղել պատմական Հայաստանի Սյունիք նահանգին։ Պահպանվում է գյուղի եկեղեցին, որի հիմնադրման տարեթիվը նույնպես անհայտ է։ Սակայն հայտնի է, որ եկեղեցին վերանորոգվել է 1525 թվականին։ Գյուղի բնակիչները 1604 թվականին գաղթվել են Շահ Աբասի կողմից։ Վերաբնակեցվել է 1828 թվականին, Պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Սաֆրա գյուղից գաղթած հայ ընտանիքներով։

Գյուղն անմասն չի մնացել 1918-1920 թվականների հայ թուրքական բախումներից՝ տալով բազում զոհեր և ծնելով նոր հերոսներ։

Երկրորդ աշխարհամարտի տարիներին ռազմաճակատ են զորակոչվել 106 սերսեցիներ, որոնցից վերադարձել են միայն 53-ը։

Սերսը, լինելով սահմանամերձ գյուղ, 1988-1994 թվականներին նորից հայտնվել է պատերազմական իրավիճակում, սակայն բնակիչների վճռականության շնորհիվ դարձել է անխոցելի մի ամրոց։

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ։
Համայնքն ունի դպրոց, բուժկետ և կենցաղսպասարկման այլ կառույցներ։

Սերսի տարածքում են գտնվում Մեծ Վանք, Սուրբ Հովհաննես (XIX դար) և XVII դարի եկեղեցիներ, իսկ 1,5 կմ հարավ-արևմուտք՝ <Թուխ Մանուկ> մատուռը (XVII դար) և խաչքարեր։

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Սերս գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 20 հուշարձան։